ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը մարտի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանը:

12.03.2019թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Պոմպերի խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում
1.	ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ
2.	Անդրանիկ Գասպարյան ԱՁ
3.	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ
4.	«ՎԱԼՄԼ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Մ	Ծառայության անվանումը	Պլանավորված նախահաշվային գին ՀՀ դրամ	ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՁ-ի առաջարկած գին /դրամ/			Անդրանիկ Գասպարյան ԱՁ-ի առաջարկած գին /դրամ/			«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի առաջարկած գին /դրամ/			«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի առաջարկած գին /դրամ/		
			ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	ԱԱՀ	առանց ԱԱՀ
1.	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	966,240							892,440	148,740	743,700			
2.	Խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	812,600	810,000	0	810,000	772,000	0	772,000				936,000	156,000	780,00

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակիցների առաջարկած գները:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև Հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ ԱՁ-ն և Անդրանիկ Գասպարյան ԱՁ-ն ԱԱՀ չեն վճարում:

3.3 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար **«Պոմպերի, խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ էր ներկայացրել միայն **«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ**-ն, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով **21.03.2019թ. ժամը 11:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց, որ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկների գնահատման հարցում առկա է լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն և **18.03.2019թ**. կայացած նիստում իրականացված քննարկման արդյունքում որոշեց, որ 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած բոլոր մանակիցների գնային առաջարկները գերազանցում են դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով **21.03.2019թ. ժամը 11:00-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը, ընդ որում նման որոշման համար գնահատող հանձնաժողովի ղմից ներկայացվեցին հետևյալ հիմնավորումները.

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2) ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Գնահատող հանձնաժողովի տեսակետով՝

1. Գնման պլանում նախատեսված միավոր արժեքի գինը ներառում է ավելացված արժեքի հարկ (այդ թվում),

2. Մասնակիցների գնային առաջարկներն առանց ԱԱՀ-ի գնահատելուց հետո, նվազագույն գնային առաջարկը համեմատվում է առանց ԱԱՀ-ի նախատեսված հատկացման հետ և եթե այն չի գերազանցում նախատեսված հատկացումը, ապա ճանաչվում է 1-ին տեղ զբաղեցրած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ նիստն անցկացնել 2019թ. մարտի 21-ին, ժամը 11^{00}-ին, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) — Ա. Մուրադյան

Գնահատող — Ա. Պապյան

Գնահատող — Ս. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ — Ա. Մաղաքյան

Գնահատող հանձնաժողովի գործունեության վերաբերյալ [illegible] և [illegible] [illegible] [illegible]: 18. 03. 2019թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 11-ը ապրիլի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 27-րդ կետի պահանջները, 18.03.2019թ. զեկուցագիր է ներկայացվել պատվիրատուի ղեկավարին՝ վիճարկելով գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. կայացած նիստի արձանագրության 3.3 կետով ընդունված որոշման՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության հարցը, ինչի արդյունքում պատվիրատուի ղեկավարի համապատասխան հրամանով հանձնաժողովի գործունեությունը կասեցվել է՝ մինչև առաջացած խնդրի իրավական կարգավորման հարցի լուծումը: Քանի որ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունը, ըստ ներկայացված գրության, իր իրավասությունների սահմաններում հնարավորություն չի ունեցել հարցին սպառիչ պատասխան տալու համար, ուստի առաջարկել է դիմել լիազորված մամնին: Պատվիրատուի ղեկավարի կողմից ահնրաժեշտ պարզաբանում ստանալու նպատակով՝ հայցվել է լիազորված մարմնի՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, որին ի պատասխան լիազորված մարնի կողմից ստացվել է համապատասխան պարզաբանում: Նշված բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հանձնաժողովի քննարկմանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Սույն արձանագրության նախաբանում նշված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

1. Սույն արձանագրության նախաբանում նշված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ.

(Ա. Մաղաքյան)

1.1 Քննարկելով հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացված և սույն արձանագրության նախաբանում նշված փաստաթղերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատումն իրականացել Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց փոփոխել 18.03.2019թ. կայացած նիստի արձանագրության 3.3 կետով ընդունված որոշումը և դրա բովանդակությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Պոմպերի, խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ էր ներկայացրել միայն «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 17.04.2019թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:»

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ նիստն անցկացնել 2019թ. ապրիլի 17-ին, ժամը 12^{15}-ին, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող՝	Ա. Պապյան
Գնահատող՝	Ս. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17-ը ապրիլի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման նպատակով բանակցությունն վարման վերաբերյալ

(Ա. Մաղաքյան)

«Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար «Պոմպերի, խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ էր ներկայացրել միայն «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 17.04.2019թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը», սակայն սակայն 17.04.2019թ. ժամը 12:15-ին կայացրած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին մասնակիցը չներկայացած բանակցության, ուստի «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկված գինը մնաց անփոփոխ:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **23.04.2019թ** (հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ **Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:**

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ներկայացման վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող՝	Ա. Պապյան
Գնահատող՝	Ս. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան